# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 14

### ՍԱՐԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 158-րդ և 159-րդ հոդվածներով և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի 1384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> թիվ 190-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ղեկավար՝ Սարիբեկ Կարապետյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ղեկավար՝ Ս.Կարապետյանին, 2019 թվականի օգոստոսի 19-ից 30-ը ներառյալ տրամադրել 2013 թվականի չօգտագործված արձակուրդը, 10 աշխատանքային օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի սեպտեմբերի 2-ից:

3.Համայնքի ղեկավարի /Ս.Կարապետյան/ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածում նրա լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա.Սիմոնյանին:

4.Գլխավոր մասնագետ՝ Լ.Աղաջանյանին վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի օգոստոսի <<13>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 10⁰⁰

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 15

### ՄԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 158-րդ և 159-րդ հոդվածներով և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի 1384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> թիվ 190-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Առաքելյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետարանի քարտուղար՝ Մարինե Առաքելյանին, 2019 թվականի օգոստոսի 19-ից 29-ը ներառյալ տրամադրել 2009 թվականի չօգտագործված արձակուրդը, 9 աշխատանքային օր տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի օգոստոսի 30-ից:

3.Մարինե Առաքելյանի արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածում նրա լիազորությունների կատարումը վերապահել նույն աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ /ծածկ. 2.3-1/ Լուսիկ Աղաջանյանին:

4.Գլխավոր մասնագետ՝ Լ.Աղաջանյանին վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2019 թվականի օգոստոսի <<13>>
գ.Լուսագյուղ
ժամը՝ 10:30

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Լուսագյուղ, (093) 570336, lusagyugh.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2019**թվականի N 18**

### ԳՆՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Յաստատել Յայաստանի Յանրապետության **Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի** 2019 թվականի գնումների փոփոխված պլանը՝ **համաձայն հավելվածի:**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**2019 թվականի օգոստոսի <<16>>**
**գ.Լուսագյուղ**
**ժամը՝ $13^{00}$**